ՏԱ. ՄԱԿԱՐԵՆԻ

(«Պավլո» 18, IX—41)

## ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿ ԱՆՑԱ. ՈՒԼՅԱՆՈՎԱՆ

Մարտկոցը ֆաշիստների գեմ մզգող դաժան կոխիների բազմամյա ճանապարհ անցավ : Այդ կոխիների ընթացքում ձիերը խիստ ուժապատ էին եղել և հարկ եղավ մարտկոցը ևս կանչել սահմանվոր գծից :

Այդ ժամանակ մարտկոց եկավ մի աղջիկ :

Նա անմիջապես դործի անցավ : Նա համարձակ մոռեցով ձիերին իր ուայռուակով, նայեց նրանց, հաշվեց չիվոնչներին և սկսեց բռւժել նրանց : Անառանարութ Անյա Ռույանաման ճարպիկորնեն պրոտում էր այդ Հեկառների, Դրուժակների և Վեռնիների շուրջը, սրբում քերծիքածքները, զեղ քում հարած տեղերը, բռւժում հիմանադրյաններն ու վերքերը, կապում, կոմպես էր զնուում, մասսաժ անում...

Մի քանի օրից հետո Անյա Ռույանաման բռւժեց և շարք վերադարձեց 38 ձի : Այդ օրից սկսած Անյան ամբողջ մարտկոցի սիրելին դարձավ :

...Այս երեկո էր : Մի խումբ հրեանախորներ ընթրում էին մթության մեջ : Խվանմ էր աղջկա հնչուն ձայնը : Նա զանազան կարգադրություններ էր անում, խնդրում էր էլի մի կաթա-

կուրսունքիլ բերել, մուշացաւ էր ուստիարկութ թեյի հետ, ծիծառ-  
դիլի բանելը էր պատճռում:

Հետո բոլորը ղնացին քննելու: Անյան պատկեց մարտական  
մեջնայի մեջ: Խոչ որ մի տեղից նրա համար մատրաց և սկսի-  
նել բարձ հարցեցին: Նրա կողքին պատկած էին հրեանու մար-  
տիկները, և նա պատճռում էր նրանց իր ուսման մասին կուզնեց-  
կու անսանգութ ական տեխնիկումում, իր կյանքի մասին, մոր  
մասին: Բոլորը լուս և ուշողիր լուսմ էին նրան:

Եվ հանկարծ հրաման եկամ՝ տեղից շարժվել և գրավել  
կրակացին զիբոքերը:

— Մնաց բարեւ, Անյա, — առաց մարտկոցի հրամանաւուացը  
— մենք զնում ենք:

— Իսկ ե՞ս...

— Իսկ չի կարելի, ոռ այնուզ անելու բան չունես...

Եվ հրամանաւարները և մարտիկները, պատրաստվելով մեկ-  
ներու, շտապ-շտապ մուտենում էին աղջկան, թոթվում նրա  
ձեռքը, ոսում էին շատ հօսարակ, լով խոռոքեր — այնպիսի  
խառներ, որոնք մուռմ են մարդու սրբում լոնդմիչու, ամբողջ  
կյանքում:

Քործող բանակ

Ե. Վ. Ա. Ա. Թ. Պ.

(«Իզմիտախ» 8/VIII)

## ՍՄՈԼՆՈՒ ՌԱՅՈՆԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ

Երբ սկսվեց հայրենական մեծ պատերազմը զերմանական  
ֆաշիզմի դեմ, ինդու Զիսայակովան, որը վարսավիքութ յուն էր  
սպառում, ներկայացած Անդրնոցադի Ամոյնու ուստիութ զինկուսի-  
սարքաւա և դիմում տվեց, խնդրելով իրեն ճակատ ուղարկել:

Նույնպիսի դիմումներ տվին նրա լնկերու հիները՝ կոմառմուլի  
սարքումի հրահանդիր Եվգենի Պուխտվան և գործակաւուր Տատ-  
յանոս Գորսովնիշեան:

Աղջիկների խնդիրը բարպարագվեց: Մի օր Երեկոյան, Կիբով-  
յան Երեկաթողի ղնացքը տարած նրանց դեպի հյուսիս: Ճակատ  
էին մեկնում մի ամբողջ ջոկատ կամայիք և աղջիկներ, որոնք բո-  
լորն էլ Ամոյնու այցուից էին: Հետո նրանք զնացքից իջան և  
նստեցին ավտոմեքենաները:

— Ահա այսուղ լինելու է մեր լաղերը, — ասաց հրամանաւարը նրանց :

Աղջիկները կարծում էին, թե իրենք ուսումնակառումն են : Սակայն մինչև առաջավոր դիմու շատ կար : Եվ, այդ բայց բացի, զեղինֆեկցիոն-լիմացարարական ջռկառը, որտեղ նշանակել էին նրանց, առաջավոր դիմությում ոչինչ չուներ անելու :

Թուքցնելու հարկ չկա, շատերը հիսութափած էին . այսպիսի բայց մանակախի մասին չէր, որ նրանք երազում էին :

Օրերն անցնում էին : Զոկատում երեսն եկան ստախանութականներ, մրցության նախաձեռնողներ : Մի անգամ ջոկատի պարզ հայտնեց :

— Բառովան ըլացել է 100 կտոր :

Հետո Բառովան հասցրեց մինչև 120 կտորի : Նրանից եռ չըմբաց Լորանովան : Զոկատի ամենաերիտասարդ աղջիկը՝ Արմելիկոն աշխատում էր որպես յակական լիմացարարուհի : Բոլորն սկսեցին կատարել, իսկ շատերը՝ զերսեկատարել իրենց նորմաները :

Ամեն օր լիմացաստնեց առաջավոր դիմու էին ուղարկվում ժամանք, վայրուն սպիտակեղենի կատոցները : Զորամասներում բոլորին հայտնի էր, որ այդ սպիտակեղենը ըլացել էն Լենինգրադի աղջիկ-կամավայրները : Իսկ աղջիկները գիտեին, որ ճակատում զնահատում են իրենց աշխատանքը :

Դործող բանակ

Ն. ԿՈՂՈՎԱՆԱՆԻ  
(«Իզգ.» 2/X)

## Ա.Ռ.Ա.Զ.Ա.Վ.ԱՐ ԳԾՈՒՄ

Աղյուսակ Փինների դեմ մղած պատերազմի ժամանակ դրույժնական Քանենյան Կուղբյավցեան և Լիզան Տիխոմիրովին աշխատում էին դիմությական Հիմնադանուցում : Հետովայում նրանք բնդունվեցին սանիստարական կուրսեր :

Երբ Փաշինստական Հորդաները հարձակվեցին մեր եղկրի վրա, Քանենյան և Լիզան ներկայացան Կուրմիր խաչի շրջանուցին կոմիտե և խողբեցին իրենց անմիջապես ուղարկել ուղղմանակատ :

... Դա տեղի ունեցավ կոմի երրորդ օրը։ Սանկտուրական մեքենայում այդ երկու քույրերն ուղղեցամ էին վիրավոր հրամանաւարին, որի վերջութը քիչ առաջ մեծ խնամքով կրագել էին և նրան զուրս բերել թշնամու կրակի առակից։ Դիմացից հանապարհով զալիս էին մի խռովի դիմովորականներ։ Քանիքան առաջինն էր, որ այդ խմբի մեջ նկատեց Սովետական Միության ժարշալ կ. Ե. Վոլուշելավից շափազանց ծանոթ, հարազար զեմքը։ Հյուսիս-Արևմտյան ուղղության զարգերի զիխավոր հրամանատարը մոռեցավ աղջիկներին։ Նա ձեռքը դրեց Քանյայի ուսին։

— Ապրեք, աղջիկներ, արդարացրիք վատահությունը։ Դուք խկական ուսպմանակատի ընկերուններ եք։

Մարշալի հետ ունեցած հանդիպումը հուզեց աղջիկներին։ Նրանք մտածում էին, որ իրենք շատ քիչ բան են արել որպես զի արժանի լինեն զիխավոր հրամանատարի դույմաներին։ «Աղջիկ, աղջիկներ, արդարացրիք վատահությունը» անմտանալի բառերը շատ բանի էին պարտասվարեցնում։ Նրանք լցուած էին հարազար կարմիր Բանակին էլ ամենի շատ ծառայություն մատուցելու ցանկությամբ։ Ասիթք շուտառի ներկայացամ։

Տեղի էր ունենում թիժ կոմի ։ Բայց ահա մեխանիզմագությունը ժամանակավորապես դադարեց։ Զարպուշակ լուսթյան մեջ քույրերը սողում էին դեռի այն կողմը, ուր կարող էին վիրավորներ լինել։

Անտառի մաս, առվի մեջ, նրանք նկատեցին երկու մարտիկների և մի լեյտենանտի ։ Պարզվեց, որ մարտիկները թիժեւ վիրավորված են։ Վիրակապությունից հետո նրանք կարող էին ինքնուրույն շարժմանը։ Մինչդեռ լեյտենանտը ծանր վիրավորված էր։ Քանիքան և Լիզան դրուշագիտն զրին նրան պատճարելի վրա և իրենց թանգարժեք ընտառի առաջ շարժմեցին դեպի անտառ։

Եվը մի 10—15 քայլ և նրանք հասած կլինեին նապատակին։ Սակայն հակառակորդն անսպասելի կերպով կրակ րաց արեց։ Քանիքան բռնեց իր ձախ թիժ։ Լիզան կապեց վիրավոր ընկերունուն և աղջիկները շարունակեցին իրենց ճանապարհ։

Մինչև բժշկական օգնության առաջիկա կայտնը Քանիքան լեյտենանտի հետ զնում էր միենույն մեքենայով։ այն լեյտենանտի, որի կյանքը նու փրկեց։

Այժմ Քանիքան հիմանգանցումն է։ Նա անկեղծորեն հուզված է, որ ինքը ստիպված է ժամանակավորապես բաժանվել իր

մարտական ընկերութիւններէց : Ալզարի հայրենաստերի ամբողջ միաւ-  
քը ուղղված է միայն մի կետի — շուտով ևս դնալ, դեպի  
հաւառ :

Դորձող բանակ

Ս. ԴՐԱՅԲԻԿԻՆՈՒ  
(«Դամ. Գրավդաշ 5/VIII»)

## ԿԻՆՆ ԱՆՑՈՒԽՄ Է ԿԱՄՈՒՐՁՈՎ...

Ֆաշիստները ներխուժում են քաղաք : Նա մեռած է թվում.  
գոտարկի, ամայացած փողոցներ, ամուր մարկված գոներ ու  
լուսամուտներ : Քաղաքը լքված է : Ասկայն հենց որ ֆաշիստնե-  
րը հրապարակ էն հասնում, նրանց դժբանն սկսում է զնողակների  
տարափ տեղալ, զնողացիրներն սկսում են հնձել :

Բազարը լքված չէ :

Կիսարաց փեղկով մի տանիք, խիս ծաղկամաններով պատած  
մի պատշչամբ, զույնը դցած մի կառու՝ սեացած ծխնելույզով—  
այս ամենը թշնամի են արդ օտար մարդկանց և ամեն կողմից  
նրանք կարող են հարված սպասել :

«Դու զբավել ես մի կետ և կամենում ես քեզ հանդի՛սո  
զբավ նոր վայրում— ոչնչացրու քազաքի կեսը, մյուս կեռն ինքը  
ծանկի կըս— այսպես է ասում զերմանական մարդակերների  
կանոնադիրը : Բացամասկում է երեք հարկանի, սպիտակ,  
ոյսնապարզ շնչքը : Հետո օգն է թոշում մի խոճիթ, երկրորդը,  
երրորդը, հինգերորդը : Հասարակի, երկու պատուհանով խրբ-  
ճիբներ :

Հին, մեզոնինով տան դաները բացվում են և այդտեղից դուրս  
է վազում մի կին : Նա զվարաց վալում անցնում է ճանապար-  
հը, անցնում է մարդազետինը և ուղղվում զեղի մեզ, դեպի  
դուռանցը : Նա ետ չի նայում, — թող բոցերը կլանեն նրա տան  
կոտորը...

Փայտե կամուրջով անցնում են կարմիր-բանակայիններ .  
նրանք անցնում են մյուս ափը, որպեսզի մերախմբամորվեն այս-  
տեղ և կամի մանեն հակառակորդի հետ : Նրանք դեռ կզերս-  
դաւանան այդ քաղաքը : Անցումի մաս մոշու ամպեր են . ներքե-  
մում, կամուրջը պահող հասա ոյտների արանքով խոխոջաւ է  
ջուրը : Կինը վազում է՝ ամպի մրա թողնելով իր մերկ ոտքերի  
հեաքերը : Նա զրկել է զունալոր թաշկինակի մեջ փաթաթված  
երեխային, թեփ մի կապոց է կախված :

Երեխան ճշում է լարված, բացելով իր անառամ, կարմիր թերանը և բշտիկավոր թուղթը ծորում է նրա ծնուալից: Շեկ հանքից քիչ վերև երեւում է սև սպին և արյան կարմիր շիմքը չորացել է այսօն: Աղիսպորմ ձայնով ճշում է երեխան: Կինը մեղմում է նրան իր կրծքին: Բարձրառհասանկ, ամբակազմ մի կարմիր-բանակային դանգաղեցնում է քայլերը և երբ կինը համասրավում է նրան, մեկնում է իր ձեռքը, օղնում նրան ոտք դընելու կամուրջին, հետո շտկում է ուսի դոտին և արագ քայլերով առաջ է անցնում հասնելու իր ընկերներին:

Կինը հենվում է կառուրջի ճաղերին և խոր շունչ առնում: Նա սեղած, նիհար դեմք ունի, աչքերի տակ կան կապույտ շրջանակներ, հանքերի արանքում գոյացել է խիստ ծալքավոր կնճիռ: Նա շարժում է չորացող շրմունքները:

— Հանդսաացիր, զավակս...

Կնոջ անունն է Մարիս, աղղանունը՝ Վասիլեկոս: Նա քառան տարեկանից մի քիչ ամիելի է: Նա աշխատում էր ապակու գործարանում իրեւ բրիդաղիր, ամուսինն աշխատում էր անտառապետությունում: Այս օրը, երբ հիսկերյան հորդանակը ներխուժեցին մեր երկիրը, նա դնաց ուղղմանակատ, խիլ հաջորդ օրը, համեստի 23-ին, նրա ընտանիքում ծնվեց մի աղջիկ:

Երեխան ճշում է: Նա ցավ է զզում: Ֆաշխատները ուումքեր նետեցին «ուղղմական օրեկաների» — խաղաղ բնակիչների բնակարանների վրա և վասիլեկայի տան վրա ընկած ուումքի բեկորը զիտամ երեխայի երեսին: Աե վերը, չորացած արյուն:

— Հանդսաացիր, զավակս...

Կարմիր-բանակայինները քայլում են առաջ: Այս թիւտը նրանց ծածկում է հակառակորդից: Նրանց հարկավոր է անցնել ցորենի արառվ դեպի գյուղի շրջակայքը, զբավել հարմար գիրքեր և մյուս օրը կոտի մտնել քաղաքի համար: Բարձրահասակ հեծելակ Շենքիովը բռնած իր ձիու սանձից, անց է կացնում նրան կամուրջով: Կամրջի վրայով, հրետանու եռնից, զնում են հրետանավարներ կուրիովը և Սուխովարավը: Անցնում է լեյտենանտ Ռոմանչուկը... Հանկարծ, անտառի ծայրից լովում է ավտոմատների համադարկը: Ըստ երեսութին հակառակորդը նկատել է շարժումը: Մի երիտասարդ մարտիկ, արեւից այրված հոնքերով, օրորվելով բռնում է փորը: Նրա մտների արանքից ծորում է արյունը:

Կինը ձարի ձեռքով բռնում է վայր ընկնող կարմիրբանակու-

յինքն : Նրան դժվար է պահել ուժապառ, Հանկարծ ծանրացած մարմինը : Օգնության է Հանուում սանիստարը : Անցումի վրա, լճացուծ արյունից գոլորշի է բարձրանում : Կինը զևսից բարձրացնում է կապոցը և կրկին դցում թնին ու առաջ անցնում : Մի կարմիրբանակային վաղում է դեօյի նաև և արագ առում .

— Շուտ անցիր, ընկեր, պայմեցնելու ենք :

Մի ակնթարքի կինը ևս է զանում և նայում զերմանացիների կողմից որավիած՝ մխացող քաղաքին : Ո՞չ, նաև վերջին անգամը չէ, որ նայում է այդ կազմը : Մենք կուրաղառնանք : Մարտիկները դիմքեր ևն դրավում : Կոխի է լինելու :

Մանկան ձայնը զնալով ավելի ու ավելի խուզ է դառնում : Փոքրիկ մարմինն այլին չի շարժվում, նաև սառչում է : Կինը ցնցվում է : Այժմ ամեն քիչ վերջացած է : Այժմ ո՞ւր զնուզ : Հիշում է քիչ սուսջ վիրավորված մարտիկին, որը հեծած էր իր ձեռքին : Ո՞չ, նաև միայնակ չէ : Նա զիսեն, թե ինչ պետք է անի և որն է իր տեղը : Կոխի է լինելու, և Հարկավոր կլինեն իր ձեռքերը, որոնք զիտեն վերքեր կապել, Հարկավոր կլինեն նրան հասարակ խոսքերը, որոնք կարող են ցավի մեղմացնել . . .

Կարմիր բանակայինը կանչում է .

— Շուտ արա, ընկեր, պայմեցնելու ենք :

Կինը անցնում է կամուրջով . . .

Դործող բանակ

68. ՑԱՅՏԱՎ

(«Պատկան» 29/VIII—41)

## ՔԱՂՋԵԿ ՄԱՐԻԱ ԿՐՈՊԱԶԵՎԱՆ

— Դուք է՞լ մեզ հետ ճակատ, — Հարցոին զնողացրողները Մարիու կրոպաչեացին :

— Բա ինչպես, ի՞նարկե, դայիս ևմ :

Այս էր Կրոպաչեայի առաջին խոսակցությունը մարտիկների հետ : Գնդացրողները չեին հավատում, որ այդ փոքրիկ, նրանի կազմ, ջերմ ու սրտազին ձայնով կինը կմնա նրանց մաս որպես քաղզեկ և կկիռի նրանց հետ ճակատացին կյանքի ողջ ծանրությունը : Սակայն Մարիա Վաչուլավովովնան չուտով ցրեց մարտիկների կասկածները, նվաճեց նրանց սերն ու վստանությունը :

Ա-ԱՖՍԻ Գերազույն Սովորի դեկուտատ ընկ . Կըոպաչեային

Անհնդրագում շտաներն են ճանաչում : Սովորեցնելու, դաստիարակելու, զպրոցականների մեջ սովորական մարդկանց լավագույն հատկությունները պատվառանելու արվեստը նրան համար առաջանդավոր մանկավարժի լայն համբաւի է ստեղծել :

Հայրենական պատերազմի առաջին խել օրերից վաստակավոր ուսուցչուհին Կարմիր Բանակի շարքերումն է : Նա արագաշարժ է, ժիր, աշխաւոյժ, շարունակ դանակում է մարտիկների մեջ :

Քազմարագմունքները նա անց է կողմանում չղերազանցված վարպետությամբ : Նրա պատմությունները՝ Պիտերի սրբութեարանների հերոսության, սովորական մարտիկների արիության մասին, ոգեշնչում են մարդկանց դեպի խվարախության :

Ինչ. Կրոպաշեան դիօսուկ կրակում է հարցանից : Նա որիութեան է զնողացրին : Սովորել է նեաւել նունակի : Եվ ինչպես այլ բոլորից հետա մարտիկները չափաստրվեն իրենց քաղղեկին :

Երբ զիշերը ճակատ էր մեկնում առաջին հշելանը, նրա հետ մեկնեց նաև Մարին Կրոպաշեան :

Մարտի զաշտում քաղցեկ ընկ . Կրոպաշեան հանդեռ բերեց տոկունություն և արիություն : Նա ցույց տվեց իրեն սրբն սոցիալիստական Հայրենիքի, մեծ Լենինդրագի համատարիմ դռւուր :

... Գիշերը զարամառը զբարեց պաշտպանության նոր դիմ : Մարտիկների հետ միասին խարսխառ մտավ նաև . քաղցեկը : Նա չուկի համանատառը ընկ . Կոնդրատիվ զնողացրային անձնակազմի հետ էր :

Լուր պատկան էին, ուշի ուշով նայում էին խամարին : Մոտ 800 մետրի վրա երեսոց հակառակուրդի տանկը :

— Անմիջապես հայրենել — հրամայեց ընկ . Կրոպաշեան՝ ուղարկելով կարստուրին :

Շուտավ թշնամու տանկի գեմ զուրս եկավ մեր տանկը : Մերջինս, կրակ բացելով, համարձակուրեն առաջ նեւովեց : Մրամատից երեսում էր, թե ինչպես բացերավ բռնված Փառխառական տանկին սկսեց ետ-ետ դնալ : Նրան օղնություն եղան ես երկու Փառխառական տանկեր :

— Դուքս սոցացին օձերը նբանք էլ կստանան իրենց բաժնը, — առաց Կրոպաշեան ջոկի հրամանառարին :

Եվ, կարծես նրան բառերը հաստատելու համար, մարտիկների դիմի վերենավ թուան մեր հրեանու արկերը :

Թշնամու. առանձինը կատաղի կրակ բացելով սկսեցին զևս ու զեն ընկնել կոմի դաշտում։ Նրանք արգեն հեռու չէին՝ այն խրամաներից, որտեղ գնդացրողներն էին պատկած։ Արկի բեկորը վիրավորեց երկրորդ համարին, ընկ։ Բիստրովին։ Նրան վոխարինեցին կանգառութեան և կրոպաշեան։

— Դուցե և առաջինք, — առաջարկեց ջոկի հրամանաւութեան։

— Այդովիսի հրաման չի եղել, — Հանդիսաւ պատասխանեց ընկ։ Կրոպաշեան, շարունակելով դիմել մարտի դաշտը։

Թշնամու. ավտոմատավորները կրակ բացեցին։ Մեր զբնացրողները պատասխան կրակ բացին։ Փաշխաները փորձուած էին տանձերի ևտեից առաջ շարժվել, կոտրել մեր զիմազրությունը։ Սակայն սովորական զնողացիքների կրակը նրանց հետ շարժեց։

Այդ կոմի ժամանակ ընկ։ Կրոպաշեան վիրավորվեց։ Վիրավորվեց նաև ընկ։ Կոնդրատունը։ Երկուոն էլ սողալով սկսեցին ետ զնուալ, իբրա ետեից քաշ տալով զնողացիքը։ Մարիս կրոպաշեանը մի ձեռքով բանել էր հրացանը, իսկ մյուսով՝ զնողացիքը չապահենը։

Գյուղի մոտ նրանք Հանդիսացին վիրավոր մարտիկ ընկ։ Բիստրովին։ Զնայած ինքը կրոպաշեան վիրավորված էր զվարից և թերից, բայց կառեց օրյունաքամիող մարտիկի վերքը։

Եիզափի կին-քաղղեկը Հիմանդանոցում եղած ժամանակ առաւմ էր։

— Հայտնեք բոլորին, որ չուտով շարք կիվերազանամ։ Մենք անխան կոչնչացնենք Փաշխառական չներին։ Նրանք ուզ չեն զնի մեր հարազատ, սիրելի Լենինցը։

Դարձող քանակ

Մ. Դնեպրի Ա. Ա.

(«Հայկու. գաղեա» 20/VIII)

## Վ. Ա. Խ. Ա. Ո. Ա. Ս. Ա. Վ. Ե. Լ. Ո. Վ. Ա.

Զ. մեծ դյուդում զերմանացիք որոշեցին ժողով զումարել, որպեսզի «բնակչությունը զերմանական հրամանատարությանը նվիրված լինելու ցույց կազմակերպի»։ Ականց ուժեղ նախապատճենություն։

Զինովորները դալբոց քերին երեք կույսովնիկների մի հառակավոր ինոջ և երկու աղամարդու։ Այստեղ նրանց բաժանեցին և ամեն մեկին մի առանձին սենյակ տարան։

Սպան խիստ արտահայտիչ սիրայիրությամբ աթոռ առաջարկեց Վասկառա Սամելովային։

— Դուք ոչևաք է արտահայտվեք ժողովում։ Արտահայտեք մեր սերը դեպի զերմանացիները։ Ես հիմա կարդամ, իսկ դուք բայց ես հիշեք։

Առամներն իրար սեղմած՝ Վասկառա Սամելովան լսում էր զերմանացի սպային։ Սամելովան առաջամոր վուշաղործ էր, ոչակաբարք, կորիսովի ականինաներից մեկը։

Սպան, աղամազելով ուռուերն լնումն, կարդում էր դերքեւյան ստանդարտ խորանքը։

Վասկառա Սամելովան լսում էր այդ ամբողջ դառանցանցը և մասածում, տանջալից կերպով մասածում։

«Ի՞նչ անել։ Միթե՛ ևս ինձ ուսուց է Հայության փայտառակեամ։ Ամբողջ ժողովրդի առաջ Խնջողե՛ս անել։»

Սպան բավարարված էր իր աշխատանքով և գույն Սամելովայի հանգանդությունից։ Սպայի խնդրանոց Սամելովան երկու անդամ, ստանց աչք թարթելու, վարժ և հանդարտ կարգաց արդ անքատը, կրկնեց ինձն ատելի բարերը։

... Ժողովին քչել բերել էին մատակա մի քանի զյուղերի բնակիչներին։ Մարդիկ լուս կանգնած էին հրապարակում, յըրժառագույն զերմանական զինվորների շղթարով։ Ժողովը բացեց մի Հաստամությունացի սպա։ Նա հացրեց. «Ո՞վ ես ուզում խոսեա՛ և շնչառելի նայեց Վասկառային։ Ես խնդրում եմ խոսք տալ ինձ. Սամելովա՛, — ասաց Վասկառան և կանգնեց ժողովրդի առաջ։

Սպան Հայրարարեց. «Ուշում ես խոսեա Ֆառարիան Սամելովան։»

Ամբողիի մեջ իրարանցում ընկալ և Բարձրացավ արտօնեց, ուրբ վերջին շարքերում, ուր կանգնած էին զերմանացի զինվորներ, խիստ զուսպ էր, իսկ բուն բազմության մեջ՝ ալելի բարձրանցայն։

Վասկառան նայեց յուրայիններին, իր հարազաներին, այն ժարդկանց, որոնց հետ այնքան ապրել էր և մի վոքը զողովուն ձայնով սկսեց։

— Կողխողնիկնե՛ր, ընկերնե՛ր, ինձ լսեցե՛ք։ Գերմանացի-

ներին չի հաջողվի ազատությունից զրկել մեզ : Օքնեցեք մեր կարմիր Բանակին, խինք դերմանացիներին, առենուրեք, խփեցեք բոլորդ, քշեցեք...

Ազան հրեց նրան ավտոյի վրայից : Բայց այդ ժամանակ ամբոխի միջից երկու կրտսեց լսվեց :

Սկսվեց անկանոն հրաձդություն : Բարձությունն արագորեն ցրվեց : Հրապարակը ծածկված էր զիսկներով :

Վասարա Սավելովային հաջողվեց թաքնվել ներքնատանը և հետո՝ միախել ու միանալ պարսիզանական ջոկատին :

Եվ այժմ նրա կյանքը միայն մի նպատակ ունի — ոչնչացնել ֆաշիստներին, դուրս անել զազաններին հայրենի հողից :

Գործող բանակ

Բ. ԿԱՐՊՈՎ

(«Իզմայլ» 12/IX)

## ԵՐԴՈՒՄ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

Այսուղ ամեն ինչ ծանոթ էր : Յուրաքանչյուր լսարանը, յուրաքանչյուր կարինետը : Ահա այսուղ նա պարապում էր ուսանողների հետ, իսկ մի ժողով այն կողմը հավաքվում էին բոլոր ասիստենտները :

Իմ հարազատ, սիրելի կլինիկա : Aima mater . Մոսկվայի թշչական հնասինութեա :

Բարձրահասակ, վայելչակարդ մի կին, զինուրական դրեսուզ հաղին բարձրանում է առաջիններով : Հուզմունքից նրա շնչառությունն արագանում է : Ահա, ինչ-որ մեկը ձայն տվեց .

— Բիլինինա : Ելիզավետա Գիորգիինա : Հարազա՛տ իմ : Այդ դո՞ւք եք : Ի՞նչ կերպ :

— Ռւզարկել են Մոսկվա՝ դեղորայքի : Մի կերպ կարողացաւ մի ժամ զաներ ձեզ մոտ անցնելու համար :

Նրան շրջապատում են ընկերուհիները և դասախոսները : Մեկն արդեն ճարմել է մի ծաղկելիունն և հանդիսավոր կերպով մասուցել է .

— Շնորհավոր լինի բարձր սպարդեր, Ելիզավետա Գիորգիինա :

Նրան գրկում են, սեղմում ձեռքը, տառյակ հարցեր տալիս : Բոլորն սպասում են լսելու զինուրական թշչակ պատմու-

թյունը իր հերոսական զործերի մասին, բժշկի, որը դերմանական ֆաշիզմի դեմ մզգող կովի ճակատում հրամանաւարության մարտական առաջադրանքներն օրինակելի կերպով կատարելու համար պարզեատրինը է Կարմիր Աստղի շքանշանով։ Իսկ նաև համեստորեն, ցնցված ուրախ հանդիպումով, դինմորականի նման հակիրք պատասխանում է։

— Ճիշտ ասած, չգիտեմ ինչից սկսել և ինչի մասին պատմել։ Կատարում էի հրամանաւարության առաջադրանքը . . . Կատարում էի, իհարկե, լավ, ճշտորեն . . . Միշտ և ամենուրեք։

Միշտ և ամենուրեք։ Այս, նա արդեն իրավունք ունի հանրադրումարի բերելու իր աշխատանքները ուսպանակատներում . . .

... Դա 1939 թվի սեպտեմբերյան օրերին էր։ Երիտասարդ մանկական-բժիշկը թողեց Մոսկվայի բժշկական ինստիտուտի կլինիկան, որտեսով ընդումիշտ, արյունակցական կապերով կապվել Կարմիր Բանակի Հետ։

Գեղասոսորը—զինվորական բժիշկ։ Ի՞նչ կարող է անել մանկական բժիշկը մարտի գաշտերում, որտեղ, թվում է, թէ իշխում է միմիւյն պիրաբուժությունը։

Ոչ ոք այդ բանը բարձրաձայն չէր ասում։ Սակայն Ելիզավետա Գիորդիինան զգում էր, որ ոչ բոլորն են հավատում նրա զինվորական զործունեության հաջողությանը։ Ի՞նչ արած, հարկավոր էր զործով ապացուցել։

Նրան անսնում էին կովի ամենասահամոր դիրքերում։ Մարտիկներն ու հրամանաւարները նրան սիրում էին սպիտակ ֆինների դեմ մզգած կոկօներում ցուցաբերած անվանության համար։ Հետամոնդանոցը տեղափոխվեց ուսպանակատի գծից Շ կիլոմետր հետավորության վրա։ «Դիշերային աղուաները» անընդհատ ուժակութամբ էին Կարմիր Խաչով վրանները։ Սակայն զինբժիշկը Բիլինինան չէր հեռանում օնկերացինն վրանից։ Մանկաբուժը զորձել էր վիրարում։ Մարտական պայմաններում սովորեց նաև այդ արմեսոր։ Հրեատանային որոտի տակ ուսումնամեթորում էր պիրահատության տեխնիկան։

Դիմումիան գրուի էր դնում։ Նրա ետևից դնում էին բժիշկները։ Բիլինինան ժամերով պատկած էր մնում ձյուների մեջ։ Կրակի տակ նա անցնում էր ճակուտամասերը, որտեղ օդնության կարիք էր զգացմում։

Վերջացավ պատերազմը սպիտակ ֆինների դեմ։ Ընկերներին

դորացրեցին, վերադարձրին խաղաղ աշխատանքի: Իսկ նա, հե-  
լինինան ընդմիշտ մնաց կարմիր բանակում:

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրը նա գտնվում էր  
այսարարացի լատինում: Հիմանդրանոցի պետ ղիմրժիշկէ Շմեր-  
լինդը զործուղման մեջ էր: Ելիօսավետա Գիորգինեա Բիլինինա-  
յին՝ հիմանդրանոցի պետի տեղեկացին բժշկական գծով, կանչե-  
ցին բաղայի շտարը:

— Երեկոյան տեղափոխութում ենք ձմեռային բնակարաններ: Հիմանդրանոցը պետք է մարտական պատրաստության մեջ դնել:  
Պարզ է խնդիրը:

— Խում եմ, հիմանդրանոցը մարտական պատրաստության  
մեջ դնել:

Հաջորդ օրվա տառավոտյան հիմանդրանոցն արդեն պատրաստ  
էր վիրավորներ ընդունելու: Իսկ երեկոյան սանիստական մե-  
քենան բերեց մի զինվոր-ռազմական:

Մի տարվա խաղաղ աշխատանքից հետո նախկին մանկա-  
րուժը կրկին առիթ ունեցավ վերհիշելու վիրարուժությունը:  
Ռադիոս-զինվորը ծանր վիրավորված էր զից: Երիստանարդ  
վիրարուժին այդպիսի դեպքն այնքան էլ ծանոթ չէր:

Հիմանդրան սկսեց սիրար ևս տալ: Նրա դրությունը ժամ առ  
ժամ ծանրանում էր: Բիլինինան մնացել էր շվարմած: Նա զբա-  
վարությամբ վերհիշում էր այն ամենը, ինչ որ ինքը կարդա-  
ցել, կամ լսել էր դառախոսությունների ժամանակ՝ զզի վիրա-  
վորումների մասին: Հարկավոր էր դինվորականի նման ընդունել  
արագ: Առ հաստատում որոշում:

Վիրարուժն առաջարկում էր վիրավոր մարտիկին վերխաղքել  
թիկունքացին հիմանդրանոց: Դա շատ դյուրին էր անել: Բայց  
կդիմանա՞ արդյոք հիմանդր տեղափոխան դժվարությանը: Հի-  
մանդրի կյանքը միրկելու համար պահանջվում էր ոչ այնքան  
բժշկական միջոցառումներ, որքան հոգասար խնամք, որը  
բարձրացներ ամրությունը օրգանիզմի տնօսությունը: Եվ Բիլինինան հա-  
մարձակ մի մետք հայտնեց.

— Առաջարկում եմ վիրավորին թողնել հիմանդրանոցում:  
Բուժել մեր ունեցած բոլոր միջոցներով:

Եվ հիմանդրին թողեցին հիմանդրանոցում: Բիլինինան ամբողջ  
դիմուրը նստած մնաց հիմանդրի զիմանցերեւում: Առավոտյան կողմը  
հիմանդրի զրությունը մի փոքր լատվացավ: Լուսաղեմին Կ. բա-  
զարեց վիրարուժ-կոնսուլտատու եկավ: Նայեց հիմանդրին, հարմա-

նություն ավեց Բիլինինայի առաջարկած բուժման մեջողին և առաջ :

— Դուք ճիշտ եք որոշել : Այժմ հիմանդին անհատացնել չե՞ կարելի : Եթզ մի քիչ կկաղղուրպի, այն ժամանակ առանց որևէ ռիսկի աեղափոխեց թիկունք :

... Հիմանդանոցում սկսվեցին մարտական օրեր : Բիլինինան, թժշկական ամբողջ աշխատանքի կազմակերպութիւնը, նրա օդականները վաղաւց էին ընտելացել հաճախակիր ոմբակոծութեանքին : Հիմանդանոցը աեղափոխեցին անուան : Սանհիստրական վրանները խփեցին բարձրաբերձ կեշիների արանքներում : Եվ երբ շրջակայթում սկսվում էր ոմբակոծությունը, կամ անստոք վերեւ երեւում էին թշնամու սավառակները, Բիլինինան այդ բողոքներին ամենի հանդիսաւ էր շարունակում իր գործը :

Բիլինինան չէր ասում՝ «աշխատանքային օրը վերջացավ», կամ թե «այդ խնդրով մենք կզբաղվենք օրվա վերջը» : Նրա համար գիշեր և ցերեկ չկա : Գիշեր թե ցերեկ նաև միշտ կանգնած է իր գիրքում, նաև չգիտեած ինչ է հոգնածությունը :

— Այսօր Հիմանդանոցում շատ կան ծանր պիրավորներ, — զգուշացնում է նա իր ընկերներին, — պետք է պատրաստովել Հենց որ ոմբակոծումն սկսի, բոլոր հիմանդներին անմիջապես պետք է խորչերը փոխադրել :

Եվ Հարկ եղած մոմենտին, Բիլինինան, սանհիստրական ողջ կազմի հետ միասին, Հիմանդներին աեղափոխում է թաքսուցները : Այդպիսի մոմենտներ հիմանդանոցում շատ է պատուհել : Բայց չի եղել մի դեօք, որ պիրավորներից որևէ մեկը երկրորդ անդամ տուժած լինի ոմբակոծումից :

Պաշտօնատես հիմանդանոցը սպասարկում է միայն ամիսարարացյին : Պաշտօնատես Բիլինինան պարտավոր է ապահովել օգաչուների թժշկական օգնության գործը : Սակայն պատերազմն ընդարձակել է արդ շրջանակները : Հիմանդանոցի աշխատողները փրկում են պիրավոր Հրետանավորների, տանկիսաների, հետեւակայինների կյանքը : Հաճախորդների թիւում քիչ չեն կանայք, ծերումբներ և երեխաներ, — հարևան գյուղերի բնակիչները, որոնց Փաշխանները դադանորեն ոմբակոծել են Հրսող թռիչքի ժամանակ :

... Հիմանդանոցում պատկած է ավագ լեյտենանս Տերյախինը : Նա պահանջում է բուժել իրեն արտաք :

— Բժիշկ, դուք մի կերպ, Հերթից դուրս բնձ ոտքի կանգնեցրեք — կատակում է նա:

Բժիշկը դիմե, «որ հիվանդի օդուշուական կենսադրությունը հարուստ է մի քանի տասնյակ մարտական թոփչիներով: Նա զիտ Տերյոխինի վերջին խօսախոռոթյան մասին: Տերյոխինը առաջդրանք ստացավ՝ ոչնչացնել մի խումբ դերֆանական ոմբակոծիներ: Նա օդը բարձրացավ և կոպի բանեց թշնամու ամբակոծիների հետ: Նրանցից երկուոր ոչնչացվեցին: Մնաց մեկը, որն արագործն սկսեց փախճել: Տերյոխինը հետապնդում էր, սակայն ինքն էլ փամփուշտ չուներ այլն: Ի՞նչ անել: Տերյոխինը սրբնիթաց առաջ է նկատում զեպի սմբակոծիչը և Առյահարել և ոչնչացնել այն: Սակայն ավագ լեյտենանտի մեքենան ևս վնասվեց: Ինքը Տերյոխինը հարվածից չված, պատուած ճակատով, սկսում է վայր ընկնել: 400 մետր բարձրության վրա նա բացում է պարացյուտը և վայր իջնում իր ընկերների մոտ:

Երկուր չիմանկվեց բժշկին բուժելու հերոս օղուշուին: Մի քանի օրից հետո ավագ լեյտենանտը հայտարարեց, «որ նախ իրեն առաջ է զդում և երկրորդ՝ իրեն հայտնի է զեպի թշնամու բժիկունը պատրաստվաղ պատասխանատու ռեյլի մատին: Այդ խոկ պատճառով...»

Բիլինինան առանց խոսքի նրան հասկացավ: Բժիշկը պահանջում էր, համոզում, հրամայում: Խզուք:

— Լավ, այդ զեպում թույլ տվեք դոնե ձեր հիվանդության պատճառությունը մինչև վերջ հասցնել, — խնդրում էր նա, զիմնելով խորամանկության — չէ՞ որ մեզ չի կարելի հիմա հիվանդանոցից դուրս դալ:

— Այ, թոփշքեց կվերադառնամ, այն ժամանակ կավարտենք հիմնադրության պատճառության բոլոր դրանցումները, — կատակեց ավագ լեյտենանտը:

Եվ օղուշուն գնաց: Երկու օրից հետո մամուլում հրամարակվեց Հրամանադիբ՝ Տերյոխինին Լենինի շքանշանով պարզեվածքելու մասին:

Շուտով թերթերը լուր բերեցին նաև հերոս օդաչուին և նրա մարտական ընկերներին բուժող բժշկին պարզեւարելու մասին:

... Ավելարազայում միտինդ էր: Դեղի կոմիտար Լերինը մատեցավ դիմնաստյուկը հազար կնոջը, ամուր ուղղեց նրա ձեռք և ասաց:

— Շնորհակալություն, ընկեր Բիլլինինս։ Արտանց շնորհակալություն էմ ձեզ։

Բժիշկը պատասխան ճառ արտասանեց։ Եվ այդ ճառը հընչում էր արգելա երգում Հայրենիքին, որը սնուցել և փայտայել էր նրան, սովորական Երիտասարդ բժշկին։

Դարձող բանակ

Լ. Լեռնիկ, Ն. Խէլնիկ  
(«Մեղ. ապրանիկ» 9/VIII-11)

## ԹՌԻՒԶՎԻ

Զորահավաքի առաջին խոկ օրը բժշկական քույր կոմերիտուհի Դինա Սկաչկովային կանչեցին դինկոմիսարիամ։

Իր աշխատանքին ընկերներին մնաս բարեն առելու համար նա եկալ պիտույքան դիմին, կոճակներով կանաչավուն դիմնասայշորեան ու կազմույտ յուրեկան հաղին։

— Աւզգակի գեներալուհի, — կատակում էին ընկերուհիները։

20-ամյա «զեներալուհին» աշխատյժ էր և ուրախ։ Շուապ մտավ կոմածովի կոմիտեն, աղջիկներին խռատացավ երկարերկար նամակներ գրել և ինչպես անսպասելիորեն եկել էր, այնպես էլ զնուց։

Հըսմանասարությունը նշանակեց Դինային Ն. Հիւմանդանոցի ջղային բաժանմունքի քույր։

... Լուսավոր, ընդարձակ սենյակ։ Առւլ կերպով ճոճուռմ է աթոռը։ Ջուռնի սեռ սպիսուել խալամով աղջիկը դդուշորեն ուղղում է վերծակը, կուսալավ զեսպի անկողինը ինչ որ քայլում է և նորից հովհարով համաշափ կերպով հով անում։

— Քնիր, հարազատ իմ, քնիր... Շուտ կառող նանաս...

Խալամի առակից երեսում է կանկաներով կանաչավուն դիմնասայշորեան։ Ինչո՞ւ է դինովրական քույրն այս քաղաքացիական հիւմանդանոցում։ Ում հանդիսան է նա պահպանում իր այդ փառաքշական, սրապին ուշադրությամբ։

Հիվանդ կինը խուլ հառաջեց, ինչ-որ մի բան չչնջաց և այրված ձեռքը զնելով դիմավերելը, չուռ եկավ մեջքին։

— Նատաշա, սիրելիս, ջուր...

Քույրն առանց աղմուկի տեղից վեր կացավ, բերեց ջրամա-

նը, վարժ ձեռքերով բարձրացրեց հիվանդի զւտիքը և ջուր ամեց:

— Ո՞նց ես, Դինոչկա, լո՞վ ես :

— Եսու լավ :

Վերմակը ևս զնաց և բացվեց չեկ մաղերով կանացի գլուխը: Դա կուներիսունէի Դինու Սկաչկովան էր, այս նույն 20-ամյա <զեներալունին> :

.... Մոտոռներն աղմկում են միալար և հանգստացուցիչ: Սավառնակը թեթե օրորվում է: Բայց քնել չի կարելի: Շուտով հանելու են նշանակված վայրը, հարկավոր է կարգի բերել անկողիններն ու դեղորայքը, ամեն ինչ պատրաստել թանկադին հյուրերի համար: Ետ վերադառնարիս պետք է վիրավորներ բերեն և նրանց պետք է ուղեկցի այդ երիտասարդ ազգիկը: Նրան, որդ հոգումնալից սրախ տեր աղջկանը Երկիրը վասահում է 20 Հերոս-մարտիկների, որոնք իրենց արյունն են թափել հայրենիքի համար:

Ամեն ինչ պետք է լավ անցնի: Առաջին անգամը չէ, "Ի բժշկական քույր Դինու Մատովինան Սկաչկովան թռչում է դեպի Փրոնտ: Քանի՞-քանի վիրավորների նաև հանդիսա ու սիրալիր, քրոջ պես, անդավորել է սամանակի հարմար բազմոցների մեջ, ջուր տվել, խորհուրդ տվել քնելու:

Բայց ինչ պատճեն: Օդաչուները կատա՞կ են անում: Ինչո՞ւ է այսոպիսի վայրիվերումներ անում այդ ծանր մեքենան: մեկ վեր է ոլանում աղմուկով, մեկ իջում ներքին, այս ու այն կողմ դառնում: Հո չե՞ն որոշել օդաչուներն իրենց բարձր վարպետությունը ցույց տալ:

Աչ Երկու օդաչուներն էլ հանդիսա են, կենարնացած: Թարիխուն արագորեն ինչ որ բան է հազորդում: Այդպիս չեն կատակում: Բայց ինչո՞ւ է փախինչ մատունների ձայնը: Ինչո՞ւ են սամանակի թեները քայլում ծառերի կատարներին և այդքան արագորեն է մատենում հողը:

Վերջին միտքը, որ կոյժակի պես անցավ նրա ուշեղովինչ լավ է, որ վիրավորներ չեան սամանակի մեջ...

.... Դինան ուշքի եկավ մատանելի ցավից: Նրա ձեռքերի, դեմքի և սուքերի մաշկն ածխացել էր: Վերջից հսսող արյունը լցվում էր աշքերը: Ամենապլասավորը՝ վիզը սսկալի այրվում էր: Դիմուսայորկայի վղնոցին ամբողջած ցեղութղյա փողկապը բռնկվել էր և այրել վիզը: Վիրավոր ձեռքերով զատով վզնու-

Եի կոճակը և, հաղթահարելով ցամբ, քաշեց պոկեց այն և  
միացող վկնոցը մի կողմ նետեց :

Էլ ի՞նչ պառկել : Հարկավոր է զնալ : Բայց ի՞նչպես զնալ,  
եթե ուսքը չի հնազանգվում և ամեն մի շարժումից դող է անց-  
նում մարդունվ : Պեսք է զնալ :

Տարձրացավ : Փսիսէց մի քայլ : Եվս մի քայլ : Դեօքի անտառ :  
Ուր է ճանապարհը : Ծառերը տարօրինակ կերպով ծամային էն  
կարծես : Տերեների զույնն էլ է վոխովէլ : Քայլ : Եվս քայլ :  
Կարծես վայր ընկալի ...

— Իմ հարազաւ աղջիկ : Ո՞վ է քեզ այլպես այլանդակել :  
Իմ վուրբակ աղջիկ ...

Անձանոթ կանայք խնամքով բարձրացրին նրան և տարան  
անտառից : Գյուղական բուժակը մարդանեցախառն հեղուկից  
կոմորես էր զնում վերքերին : Գիշերն անցկացրեց հիմանդառու-  
ցում : Խոկ առավոտյան եկան աերոդրոմից և տարան մարտական  
առաջադրանքը կատարելու . ժամանակ վիրավորված թէ շկական  
քույր Դիմու Մատավեճան Սկաչկովային :

... Գիշեր ու ցերեկ հերթագործում էին Դիմայի մահճակալի  
մոտ նրա ընկերուհիները : Այցելում էին պաշտոնակիցները,  
բժիշկները, կամերիուական կազմակերպության քարտուղարը և  
այլն :

Դիմայի զպրոցական ընկերուհին, կամերիուակի Բնասանովան  
հարցնում էր .

— Զէիր վախենո՞ւմ, Դիմա :

— Դե, կոիպ է, բա ո՞նց : Թէկես մի քիչ ցավ է դարխո, որ  
շդխում, թէ մերոնք խմեցին այն Փաշխատին, թէ վախսավ :  
«Հերո՞ս» : Թող մեր սավառնակի վրա զենք լինել, կահսնեինք  
թէ ով ում կհազթեր : Մենք առանց զենքի էինք, զնում էինք  
վիրավորներ բերելու ...

— Հարցնում ես, թէ ո՞րոեղ ևմ աշխատելու : Աերոդրո-  
մում վախանգավո՞ր է : Ես չառ զիմացկուն եմ : Մեր աղջիկները  
սավառնակով զնում էին վիրավորներ բերելու, մեկ էլ տեսար  
վերսողառնում էին զատարկածեն : Վահանգավոր է : Խոկ ինձ  
միշտ էլ հաջողվում էր : Մի անգամ թռանք դեպի Գ. քաղաքը :  
Ճանապարհն պիտի իջնեինք կ. և զեղորայք թողնեինք այն-  
տեղ : Վերջին կարյանում մեզ ասացին, որ կ...ում այժմ կատաղի  
կոխներ են, թռչել այնակղ չի կարելի : Մենք օդաչուի հետ  
նայեցինք իրար և առանց խոսքի հասկացանք իրար : Բայց և

այսպիս դեղորայքը տեղ հասցրինք: Մուկալի կրակ բացին մեզ  
վրա, բայց ապահով հեռացանք: Ասում եմ, ախր, դիմացկուն  
եմ ես...

Ահա պատկած է նա, փայլուն, երկնապույն աչքերով բժշ-  
կական քույրը: Դեռ չեն անցել այրմածքների հետքերը պարա-  
նոցի վրա, դեռ ոև են ձեռքերը և գեմքի վրայից շերտ-շերտ  
պոկվում է կաշին: Խակ նա երազում է արդեն նոր թռիչքների  
մասին: Հիմնայի սովորական աղջիկ է նա, մոքուր սրավի,  
Փաշխատ զաղանների գեց լցված սրբազն առելությամբ:

Զի կարելի հաղթել այն երկրին, որն այդպիսի զուստքը  
ունի:

Դործող բանեկ

Ա. ԳԵՐԵՍԼԱԿՈՒՆԻ

(«Եկեղեցիների ուրախներ» 6/IX—41)

## ՀԵԲՈՍՈՒՀԻՆ

Սովորական ինֆորմբյուրով սեպտեմբերի 3-ի երեկոյան  
Հազորդագրության մեջ Համառոտ կերպով տաված էր.

... «Երբ պոնտոնային կամուրջն արդեն պատրաստ էր,  
Հակառակորդը հրետանային կրակ բացեց: Հենց հոգի կարմիր-  
բանակային սասպյորներ վիրավորվեցին թշնամու արկերի բեկոր-  
ներից: Վիրավորներին անմիջապես օգնության համան բժշկական  
քույր Վերա Նիկիտինան և զինուուժակ կուղելինը: Գնդացրային  
և Հրետանային կրակի տակ նրանք զուրու բերին վիրավոր կար-  
միրբանակայիններին, տարան թաքսուացները և կապեցին նրանց  
վերքերը: Վիրավոր կրտսեր Հրամանասարն ընկավ դեսր: Խիզախ  
բժշկական քույրը նետավեց ջուրը և ապասեց Հրամանասարին: Ան-  
ցումի մաս տեղի ունեցած կուլում ընկ ընկ: Նիկիտինան և  
կուլելինը զուրու բերին 31 վիրավոր մարտիկների ու Հրամանա-  
տարների և նրանց վեհքերը:

Մարտայա Զուրկառան, Միտիչչին քաղաքի № 2 մանկա-  
ծուրի քույրը, խեց թերթը և վազեց վարիչի մաս.

— Աննա Իղնատենա՛, կարդացէք, սա երեխ նա է: Մեր Վե-  
րա Նիկիտինան:

Շուտով Հավաքվեցին բոլորը, նրանք որոնք աշխատել էին  
Հերոսուհու հետ միասին այդ մանկամատում: Կարդում էին  
Վերա Նիկիտինայի հերոսության մասին, հիշում նրան:

Աժառային որ էր : Բարձրահասակ, վայելչակաղմ, չիկահեր  
մի աղջիկ բաժանվում էր իր հարազատ կոլեկտիվից : Երիտա-  
սարդ հայրենասերունին մեկնում էր ճակատ : Նրան ջերմ կեր-  
պով ճանապարհ էին դնում, մաղթում հաջողություն և երջանիկ  
վերադարձ :

Շուտով ասածանվոր դիրքերից Մետիչի եկավ առաջին հա-  
մակը : Բժշկական քույր Վերա Նիկիտինան զբում էր .

«Թանկաղին բարեկամնե՞ր : Իմ մարտական աղջունը Լյուբով  
Ֆեղոսովնային, Աննա Խղնատենային, ձեզ՝ Նասաշա և Մա-  
րտիրա, մեր փառապանձ աղջ կոլեկտիվին և Նամակս զրում եմ  
խրամատում, այնպես որ ձեռաղիրս կարող է վաս ստացվել :  
Թուղթը զբել եմ սազավաբախ վրա, ձեռքին մատիս է, իսկ  
զիմնիս վրայով թուշում են արկեր և ականներ : Սակայն նրանք  
թուշում են հեռու, այնպես որ կորելիք է զբել : Երբ վերապատ-  
ճամ, մանրամասն կողասմեմ հետաքրքիր մարտական էպիզոդ-  
ներ :

Սիրելիներ, հարազատնե՞ր : Ահա մի ամսից ամենը է, որ ես  
ձարկատումն եմ : Մի քանի օր առաջ ամենդ կոխի տեղի ունեցամ,  
սակայն ինձ ոչինչ չպատահեց : Վերջերս մենք մի սանիտարի  
հետ ամենաթեժ կոսիք միջից զուրս բերինք մի քանի տասնյակ  
վիրափոխների՝ իրենց հրացաններով . նրանցից ոչ մեկը չընկալ  
Փաշխանների ձեռքը :

Ինձ ընդունեցին Լենինի-Մտալինի պարագայի թևենածու,  
զա ինձ մեծ ուրախություն է ոլատանում : Եզր վերջառվեն և  
խմացաւ, որ ինձ ներկայացրել են կառավարական սպարզենի : Ար-  
քան դժվար է մի կառու թղթի վրա հազորդել այն մաքերը, ո-  
րոնք հուզում են ինձ : Բայց դուք, իմ սիրելիներ, ինձ կհաս-  
կանաք ...

Ինձ քիչ բան է մնում ավելացնելու . Համբաւրեցեք իմ բո-  
լոր երեխաններին, իմ բոլոր սաներին, պահեցեք նրանց ձեր աչ-  
քի զույսի պես, իսկ ես այժմ կրակի զծում հոգ կտանեմ մեր  
թանկաղին մարտիկների մասին, որոնց ես կառակալով անվանում  
եմ իմ սաներ : Գրեցեք ինձ, իմ թանկապիններ : Ցնոր տեսու-  
թյուն : Միշտ ձեր Վերա Նիկիտինաւ :

... Թնդանոթային խուլ համազարկեր : Ամսկերի տակ սա-  
վառնում են բաղեները, հասնում . Փաշխատական անզդներին :  
Արկերը հսկայական պոսեր են վորում զետնի մեջ : Լավում է

վիրավորների թույլ հառաջանքները և ուժգին շուրջառ և Պրոն Ֆաշիստները չդիմանալով հարվածին, հետ են նահանջում:

Դնդակների ուժեղ տարափի տակ խիստախորեն պործում է բժշկական քույրը: Նա կողքին կախած ունի պայտւուակ, որն ունի կարմիր խաչի նշան: Աղջիկը մի վիրավորից անցնում է մյուսը, օղնում նրանց:

«Ծնորհակալություն, քույրիկ, այժմ ինձ լով եմ զգում», — որո բառերը ծնում են էլ ավելի լավ աշխատելու ցանկություն:

Սովետական Խնդրամբյուրոյի հազորդումից հետո, շատ չանցած, Մխտիչի № 2 մանկամուրի հասցեով մի նամակ ևս ստացվեց Գործող բանակից:

«Բժշկական քույր Վերա Նիկիտինան, որն աշխատում էր ձեզ մոտ և դաստիարակված է ձեր կոլեկտիվի կողմից, պատերազմի սկզբից գտնվում է զորամասում և, իր անձնագույն աշխատանքով, չնայած ամենատիշուտ կոխիներին, ժամանակին օդնություն է ցույց տալիս վիրավորներին: Նրա աշխատանքը մատնանշված էր Սովետական Խնդրամբյուրոյի 1941 թվի սեպտեմբերի 3-ի հազորդագրության մեջ: Ցուցաբերած հերոսության համար նույն իմ կողմից ներկայացված է հառավարական պարզևատրություն: Հայտնում եմ ծնորհակալություն ձեր ամբողջ փառապանծ կոլեկտիվին, որը դաստիարակել է խակական հայրենասերունու, մեր հայրենիքի փառապանծ հերուսունուն: Ողջույններով՝ զեներալ-մայոր Կողլով»:<sup>1</sup>

Նույն այդ օրը, մանկամուրի հուղված, երջանիկ աշխատակիցները հավաքվեցին, որպեսովի պատասխան դրեն սովետական դեներալին:

«Ձեր նամակը լրացրեց այն մեծ ուրախությունը, որը մենք պացինք կարդալով Սովետական Խնդրամբյուրոյի հազորդագրությունը մեր Վերայի հերոսական սիրազգործության մասին: Նա աշխատանքի մեջ ևս հերոսունի էր: Դաստիարակելով սովետական երեխաներին՝ նա մայրական քնքշանքով և պուրդուրանքով աճեցնում էր նրանց, մեր ապագա սերնդին: Իդուք չե՞մ, «որ նրան նամակները, որոնցում նա հարցնում է իր սաների մասին, տոպորված են այնպիսի հոգածարությամբ»: Վերան խակական սովետական աղջիկ է: Նա վարվել է այնպես, ինչուս պետք է վարվեր հայրենիքի դուռարք: Հաղորդեցեք մեր ջերմ ողջույնը բայր մարտիկներին, հրամանատարներին, կոմիսարներին՝ և քաղաքացածողներին: Ասացեք նրանց, «որ մենք թիկունքում պի-

շեր ու ցերեկ մտածում ենք նրանց մասին, օդնում ենք Փրռնաթին ինչով որ կարող ենք: Հայոնեցեք նրանց, որ նրանց դավակները միանգամայն ապահով պիճակումն են, չըջապառված են սիրով ու գուրզուրանքով, որ մեր մայրական կրծքի առակ նրանք իրենց տաք և հարժար են զգում: Բոլ մեր թանկագին վերոշեային ասացեք, թող այսուհետեւ կրկին սիրագործություններ կատարի ի վասու մեր հայրենիքի: ՄԵՐ ջերմագին ողջույնները: Յանկանում ենք ձեզ առողջություն և հաղթանակ թշնամու հանդեպ:

ՄԵՐ նամակ էլ զերցին իրենց սիրելի ընկերուհում.

«Թանկագին վերոշեա: ՄԵՆՔ լսեցինք սաղիոյով և կարդացինք թերթում, որ բժշկական քույր վերա նիկիտինան հերոսար աշքի է ընկել իր մարտական դիրքում: Դա նման է նաև քեզ, մեր վերային, սակայն մենք մտածում էինք զո՞ւ ևս այդ, թե ոչ: ԶԵ՞՞ որ մեր երկիրն այնքան հարուստ է կանանցով, որոնք սաղմաճակատում հերոսարար կովում են Փաշխաների զեմ: Բայց ահա, մենք նաև ակ ստացանք զենքերալ-մայորից, որի մեջ նա շնորհակալություն է հայտնում մեր կողեկտիվին արդախիս հայրենասերուհի զաստիարակելու համար: Որքա՞ն ուրախ ենք մենք, վերոշեա, որ մեր հույսերն արդարացան: ՄԵՐ սրտերը բարախում են այնպես, ինչպես և քոնք: ՄԵՐ մտքերը նույնն են, ինչ որ քոնք: ՄԵՆՔ ևս մեզ նվիրել ենք հայրենիքի զաշտապանության զործին: Էլ ավելի մտածված, էլ ավելի հոգատար ենք զաստիարակում մեր երեխաներին: Հաճախ հիշում ենք քեզ, թե ինչպես դու, աշխատերով մանկամտուրում, քո սաներին մերթ կարմիրնավատուրմայիններ, մերթ օդաչուներ էիր անվանում: Այժմ դու քո ամբողջ քնքությունը և հոգատարությունը նվիրել ես մեր հայրենիքի փառապանձպատկանին: Դիտենք, որ դա քո վերջին խիզախությունը չէ: Պինդ զրկում և համբուրում ենք քեզ:



Աճում, բազմանում են սովետական խիզախի հայրենասերուհիների շարքերը: ՄԵՆՔ անանում ենք նրանց թիկունքում և ուղամաճակատում, զործարանի զաղղիակի մոտ և կրակի առաջավոր զծում: Իրենց ամուսինների և նղաւյրեների հետ կողք-կողքից:

արհամարհելով վտանգը, համարձակորեն նայելով մահվան աշքերին, նրանք օգնում են էռփելու. Հաղթանակը թշնամու դեմ, Փառշխտական զաղանցերի դեմ:

Այնպիսի հերոսուհիներով, ինչպեսին է քույր Վերա Նիկիտինան, հպարտանում է մեր ողջ երկիրը:

Միահնչյուն

ՅՈՒԻՆ. ՊՈՐՏԱՋԸ

(«Մեզ, սարսահիկ» 8/Х—41)



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Մարտական ընկերություններ («Գրավուաց» և առաջնորդողը)	3
Պարտիական տոմս	7
Հերոսուհին	13
Չինքուժակ Խվանավան	15
Տանյա Տիգովելեա	17
Ցասուլը	25
Պակապոր աղջիկը	29
Հեռախոսային կայանում	33
Հերսո ուսուցչուհիները	35
Հերոսուհին	38
Հարազատ արյուն	40
Պարտիզանի աղջիկը	42
Դրուժինայի անզամը	45
Կին պարտիզանուհիներ	46
Շինելավոր աղջիկը	49
Անօտնաբուժակ Անյա Աւլյանովան	53
Ամոյնու ոայօնի աղջիկները	54
Առաջապոր զծում	55
Կինն անցնում է կամուրջով	57
Քաղզեկ Մարիա Կրոպաշնան	59
Վառվառա Սավելովա	61
Երդում հայրենիքին	63
Թոփչք	68
Հերոսուհին	71

Կազմեց և քարգանեց

Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Թարգմանուրյան Խմբագիր

Լ. Պ. ՄԻՆԱՍՅԱՆ

Վ. 1628 Պատմեր 121. Տիգուած 3000. Տօղագրական 4 ½ մաժուլ.

Մեկ մաժուլում 38·400 նշան. Հեղինակային 4,25 մաժուլ.

Ստորագրված է պատրիթյան 6 մարտի 1942 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0005419

4 Rue 10-50 4.

A 22328

1000